ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

(Լրամշակված հրատարակություն)

Երևան 2020

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ · 1969

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Թ 950

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի և Հովհ. Թումանյանի թանգարանի գիտական խորհուրդների որոշմամբ։

Թ 950 Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում.- լրամշակված հրատարակություն.- Եր.: Հովհ. Թումանյանի թանգարան, 2020. Հատոր երկրորդ.- 576 էջ. - (Արևելք-Արևմուտք մատենաշար)։

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-858-33-3
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2020
© Հովհ. Թումանյանի թանգարան, 2020

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի

վերահրատարակման խմբագրական

խորհրդի կազմը

(ցանկը բերվում է այբբենական կարգով)

Դևրիկյան Վարդան (բ.գ.դ.), Եղիազարյան Անի (բ.գ.թ.), Իսահակյան Ավետիք, (բ.գ.դ., պրոֆ.), Կիրակոսյան Վլադիմիր (բ.գ.դ., պրոֆ.), Մարգարյան Սիրանուշ (բ.գ.թ., դոցենտ), Մկրտչյան Նունե (բ.գ.թ., դոցենտ), Մնացականյան Եվա (բ.գ.թ., դոցենտ), Ոսկանյան Հերիքնազ (բ.գ.թ.), Վարժապետյան Իրիտա

Վերահրատարակության բնագրերը պատրաստեց և անվանացանկը կազմեց՝

Սուսաննա Ադամյանը

Ծանոթագրությունները լրամշակեց՝

Վլ. Կիրակոսյանը

Հատորի խմբագիր՝ *Վլ. Կիրակոսյան*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ԹՈՒՄԱՆՅԱՆ Ն. Հ., ԻՆՃԻԿՅԱՆ Ա. Մ., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ. Մ.,
ՀԱԿՈԲՅԱՆ Պ. Հ., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Գ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս.,
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մ. Հ., ՋՐԲԱՇՅԱՆ ԷԴ. Մ., ՍԱՐԻՆՅԱՆ Ս. Ն.

Տեխստը պատրաստեց և ծանոթագրեց՝
Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագիրներ՝

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ, Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

7 –2—2

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Թումանյանի մասին հուշերի երկրորդ հատորը բանաստեղծի ծնընդյան 100-ամյակի առթիվ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նախաձեռնությամբ 1969-ին տպագրված «Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ստվար միհատորյակի՝ նույն ինստիտուտի և Թումանյանի թանգարանի գիտական խորհուրդների համատեղ որոշմամբ վերախմբագրված հրատարակության շարունակությունն է:

Վերահրատարակության նպատակները, խնդիրներն ու սկզբունքները շարադրված են նախորդ հատորի խմբագրական առաջաբանում: Նույն նկատառումներով են ղեկավարվել նաև սույն հատորի պատրաստողներն ու խմբագրական խորհուրդը:

Ամենից առաջ, քիչ բացառություններով, այս հատորում էլ վերականգնվել են նախորդ հրատարակության մեջ քաղաքական-գաղափարախոսական կամ այլ նկատառումներով կրճատված հատվածները, հուշերի բնագրերը համեմատվել ու ճշգրտվել են՝ ըստ պահպանված հեղինակային բնօրինակների: Անհրաժեշտության դեպքում ուղղվել են ոճական կամ ուղղագրական անճշտությունները, հավելումներ ու ճշգրտումներ են արվել ծանոթագրությունների բաժնում:

Հուշագիրների ցանկը համալրվել է նոր անուններով՝ Մարտիրոս Սարյան, Վիկտոր Համբարձումյան, Ստեփան Լիսիցյան, Հովհաննես Քաջազնունի, Վարդգես Ահարոնյան: Հատկապես վերջին երեք հուշագրություններում ուշագրավ կողմեր են բացահայտվում Թումանյան մարդու, ստեղծագործող անհատականության և քաղաքացի-գործչի դիմապատկերում:

Լիսիցյանի հուշերում այդ դիմապատկերը մոտիկից լուսավորվում է «Հասկեր» մանկական ամսագրի խմբագրության և «Լուսաբեր» դասագրքի հեղինակային կազմի հետ համատեղ աշխատանքային հարաբերություններում: Ընթերցողը մեկ անգամ ևս համոզվում է, որ միանգամայն իրավացի է գրականագիտության մեջ բազմիցս հայտնըված այն կարծիքը, թե «Հասկերի» և «Լուսաբերի» աննախընթաց ժողովրդականությունը մեծապես պայմանավորված էր Թումանյանի երկարամյա աշխատակցությամբ, մյուս կողմից՝ հայ մանկական

գրականությունը մինչև օրս չգերազանցված իր ընտիր էջերով պարտակաև է այդ աշխատակցությանը:

Քաջազնունին և Թումանյանը՝ երկու Հովհաննեսները, չնայած քաղաքական հայացքների տարբերություններին, իրար հետ կապված էին երկար տարիների մտերմությամբ: Հատկանշական է, որ Քաջազնունին շատ քիչ է գրում բանաստեղծի ազգային-հասարակական գործունեության մասին, ծանրանում է հատկապես նրա մարդկային թուլությունների վրա՝ երբեմն դրանք համարելով բեղմնավոր ստեղծագործական աշխատանքին խանգարող թերություններ: Տեղ-տեղ անգամ հասնում է ծայրահեղության: Օրինակ՝ երբ նկատում է, թե հարուստ գրադարան ուներ, բայց շատ քիչ էր կարդում, մինչդեռ նույնիսկ Վալերի Բրյուսովի նման հանրագիտակ մեկին զարմացրել է նրա «հսկայական կարդացածությունը»: Կամ նշելով հայտնի փաստը, որ հատկապես կյանքի վերջին 10-15 տարիների ընթացքում Թումանյանը համեմատաբար քիչ է գրել, դա բացատրում է ստեղծագործական ներքին մղումի բացակայությամբ, մինչդեռ ժամանակակիցները լավ գիտեին դրա պատճառը, հայտնի է նաև հենց իր՝ բանաստեղծի հաճախակի տրտունջը՝ «մի նստեի, իմ գործով զբաղվեի ...»:

Այսուհանդերձ Քաջազնունու հուշերը շատ կարևոր դիտարկումներ են պարունակում Թումանյանի մարդկային նկարագիրը և ստեղծագործական հոգեբանությունը լավ ճանաչելու համար:

Վարդգես Ահարոնյանի հուշերում Ամենայն Հայոց բանաստեղծին տեսնում ենք ընտանեկան և բարեկամների ու ընկերների մտերմիկ միջավայրում: Թումանյան և Ահարոնյան ընտանիքները կապված էին շատ ընդհանրություններով, և հուշագիրը տանու մարդ էր բանաստեղծի հարկի տակ: Դա հնարավորություն է տվել նրան անմիջականորեն տեսնել մեծ բանաստեղծի փոքրիկ թուլությունները, հաճախ մանկականության հասնող ծիծաղաշարժ հրապուրանքները ու գեղեցիկ շարադրանքով ներկայացնել ընթերցողին: Ճշմարիտ է նաև հուշագրի եզրակացությունը, թե նա բանաստեղծ էր նաև կյանքում:

Նախորդ հրատարակության մեջ տեղ գտած մի քանի հուշագրություններ հիմնովին վերանայվել ու լրացվել են: Մասնավորապես Համազասպ Համբարձումյանի հուշերը, որ միայն երկու փոքր քաղվածքներ են նրա «Անցյալի ձայներ» հուշագրությունից, փոխարին-

վել են Թումանյանի թանգարանում պահվող հեղինակային ընդարձակ մեքենագիր բնօրինակով: Այդ բնօրինակը ենթարկվել է միայն մասնակի խմբագրումների և լրացվել միհատորյակում եղածի մի մասով:

Թումանյանի հետ հուշագրի անձնական զրույցներում, որ ներկայացվում են ուղղակի մեջբերվող խոսքի ձևով, ընթերցողը նոր հետաքրքիր մանրամասներ կարող է իմանալ բանաստեղծի՝ որպես մտածող գեղագետի ինքնատիպ մտորումների ու նախասիրությունների մասին: Բացի դրանից, Համբարձումյանի հուշերը կարևոր տեղեկություններ են պարունակում Հայ հայրենակցական միությունների միության նախագահի պաշտոնում բանաստեղծի գործունեության մասին: Այդ տեղեկությունները անկասկած հավաստի են, որովհետև հուշագիրը միության կենտրոնական խորհրդի անփոփոխ քարտուղարն է եղել՝ նախագահի հետ ստորագրելով բոլոր ժողովների արձանագրություններն ու պաշտոնական գրությունները:

Վրացերեն բնագրից Հ. Բայրամյանի նոր թարգմանությամբ և ավելի ամբողջական ներկայացված են Իոսեբ Իմեդաշվիլիի, Տիցիան և Նինո Տաբիձեների հուշերը: Թումանյանն առհասարակ մերձավոր կապեր է ունեցել ժամանակի գրեթե բոլոր վրաց գրողների հետ, բայց առանձին մտերմությամբ կապված է եղել այս երեքի հետ: Սրանց հուշերը կարևորվում են հատկապես նրանով, որ ցույց են տալիս, թե ինչպես է ճանաչվել ու սիրվել հայ բանաստեղծը վրաց գրողների շրջանում: Հատկանշական է, որ վրացերեն հուշագրություններում Թումանյանը գնահատվում ու մեծարվում է ոչ այնքան որպես բանաստեղծ, որքան որպես բացառիկ առաքինություններով օժտված մարդկային անհատականություն, հատկապես ժողովուրդների բարեկամության նախանձախնդիր ու ջատագով: Դրա պատճառը նաև այն էր, որ վրաց գրողների շրջանում ոչ միայն Թումանյանի ստեղծագործությանը, այլև առհասարակ հայ գրական մշակույթին շատ, թե քիչ ծանոթ ընդամենը մեկ-երկու անուններ կային, ինչպես Ի. Գրիշաշվիլին: Այս երևույթի կապակցությամբ Թումանյանը շատ անգամ է արտահայտել իր ցավն ու մտահոգությունը:

Ինչպես տեսնում ենք, Թումանյանի մասին ժամանակակիցների հուշերի այս հատորը եղածի պարզ վերատպություն չէ, այլ շատ կողմերով վերանայված ու հարստացված նոր հրատարակություն, որ, կարծում ենք, կհետաքրքրի ընթերցողին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Դժվար է անցյալից վերհիշել այն ամենը, ինչ կապված է այդ նշանավոր (չնաշխարհիկ) մարդու հետ, որ լցված էր կյանքով և սիրում էր այն:

Իմ առաջին հանդիպումը Հովհ. Թումանյանի հետ տեղի է ունեցել Մոսկվայում, իմ արվեստանոցում. նա այցելության էր եկել ծանոթանալու իմ աշխատանքներին, որոնց մասին լսել էր հեռվից. դա 1912 թ. գարնանն էր, երբ նա, բանտից նոր ազատված, Պետերբուրգից վերադառնում էր Թիֆլիս:

Բռնկել էր 1914 թ. իմպերիալիստական պատերազմը, և մենք բոլորս լցվել էինք վախով մեր ժողովրդի վիճակի համար, հենց որ պատերազմական գործողությունները ծավալվեցին Հայաստանի հողի վրա:

Մոսկվայում, հայ հասարակության նախաձեռնությամբ, պատերազմի սկզբին[1] լույս ընծայվեց «Поэзия Армении» նշանավոր ժողովածուն, Վ. Յա. Բրյուսովի խմբագրությամբ: Այդ ժողովածուի երևան գալը մի նշանակալից երևույթ էր ռուսական գրականության մեջ: Ռուս հասարակությանը ներկայացված փայլուն բանաստեղծներից մեկը Հովհ. Թումանյանն էր: «Անուշ» պոեմի թարգմանիչ Վյաչեսլավ Իվանովը հիացմունքով էր խոսում պոեմի և Հովհ. Թումանյանի ստեղծագործության մասին. նա փափագում էր հանդիպել Հովհ. Թումանյանին, որպեսզի անձամբ հայտնի նրան իր հիացմունքը նրա պոեզիայի առթիվ: «Անուշ» պոեմը, որ ընկերական նեղ շրջանակում կարդացել էր Վ. Իվանովը, առաջ էր բերել ընդհանուրի հավանությունը և հիացմունքը: Այդ ընթերցանությանը ներկա եղող կոմպոզիտոր Ա. Տ. Գրեչանինովը որոշել էր այդ պոեմի սյուժեի վրա գրել օպերա

և պատրաստվում էր մեկնել Անդրկովկաս՝ Լոռի, Հովհաննես Թումանյանի հայրենիքը՝ հայ ժողովրդական երգն ուսումնասիրելու նպատակով։

***

Կովկասյան ճակատում պատերազմի կատաղի շրջանն էր։ Հայաստանի խորքերից հայ փախստականների ալիքները հեղեղում էին Անդրկովկասը։

Հովհ. Թումանյանին ես տեսնում եմ 1915 թ. Էջմիածնում, հուսալքված կանանց և երեխաների մեջ, որտեղ նա, իր դուստր Նվարդի հետ, որը երեխաներին հավաքում է Գևորգյան ճեմարանի շենքը, որպեսզի նրանց ազատի ցրտից ու քաղցից։ Եռանդով լի պարթևակազմ բանաստեղծը, վշտոտ հայացքով, վհատությամբ էր լցվել տեսնելով այդ ցնցող պատկերը, քաղցի և սովի կոտորածը, երբ մեռնում էր մի անմեղ ժողովուրդ, որի մեծամասնությունը կանայք ու երեխաներ էին։

Հմայիչ էր Հովհ. Թումանյանը որպես բանաստեղծ և մարդ։ Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը. գրականության մեջ սեր դեպի ժողովրդական ստեղծագործությունը, իսկ կյանքում լայն հյուրասիրություն և սեր դեպի իր ընտանիքն ու երեխաները։ Ինձ վիճակվել է երբեմն լինել նրա ընտանիքում (նախկին Վոզնեսենսկայա փողոցում) և միշտ ներկա լինել մի որևէ ճաշկերույթի, երբ որպես թամադա, նա իր անվերջ սրախոսություններով բարձր էր պահում հյուրերի ուրախ տրամադրությունը։

Թիֆլիսում եղածս ժամանակ, հակառակ իմ բազմիցս առաջարկներին նրան նկարելու, շարունակ հետաձգում էր իր շատ զբաղված լինելու պատճառով, և այդպես էլ ինձ չհաջողվեց նրան նկարել։

Հովհ. Թումանյանը շատ էր սիրում ռուսական մեծ բանաստեղծներին՝ Ա. Ս. Պուշկինին և Մ. Յու. Լերմոնտովին։ Նա ասում էր. «Նրանցից հետո ես էլ ավելի եմ զգում մեր բնության ու կյանքի վեհությունը, որոնք պիտի մենք ավելի երգենք, որպես այս լեռների բնակիչներ»։

Հովհ. Թումանյանը կոլեկցիոներ էր. նա ձեռք էր բերում նկարներ, գրքեր և իրեր։ Այդ տեսակետից ևս նա մի բացառիկ դեմք էր իր միջավայրում։

Հովհ. Թումանյանը, ինչպես և նրա ավագ ընկեր Ղազարոս Աղայանը, իսկական զավակ էր ժողովրդի, նրա ծոցից ելած, որ կրում էր իր

մեջ նրա լավագույն ձգտումները, տենչանքները։ Այժմ, նոր կյանքի կերտման այս դարաշրջանում, անցյալի ֆոնի վրա մեծ բանաստեղծի կերպարանքն ավելի ու ավելի է ցայտուն ելնում որպես փայլող գագաթ։

1936 թ. 12 նոյեմբեր
Երևան

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

ՎԵՐՀԻՇՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԵՆ

Անհատներ կան, որոնց ներկայությունը հանրային ու ընկերային կյանքին մեջ հմայք, ուժ, վստահություն և ոգևորություն կներշնչե: Այսպիսի անձերուն կյանքը և անոնց մատուցած ծառայությունները ժողովուրդը ոչ միայն կդիտե և կվայելե հանդիսատեսի աչքերով, այլ գիտե հարգել, սիրել և գնահատել: Այսպիսի ժողովրդային դեմքերեն մեկն էր հայ գեղջկական բանաստեղծության ռահվիրան, բանաստեղծ Հովհաննես Թումանյան:

1904-ին առաջին անգամ ըլլալով տեսա և ճանչցա զայն իր բնակարանին մեջ Սևքարեցի Սաքոյի միջոցավ[1]: Բանաստեղծը իր զվարթ ու խնդուն բնավորությամբ լավ տպավորություն և անուշ զգացումներ ունենալու հմայքը ստեղծեց մեջս: Առաջին տեսակցությամբ մտերիմներ ու բարեկամներ էինք: Մեկ նայվածք մը բավ էր հասկնալու և ճանչնալու անոր սրտի անբիծ ու նկարագրին անաղարտ վիճակը: Մագնիսական ուժ մը քաշած, կապած էր զիս իրեն ավելի սիրելու, ավելի մտերմանալու, ավելի հիանալու և հարգելու: Իր բարձր հասակին, գեղեցիկ ու վայելուչ կազմվածքին կմիանային ժպտուն աչքեր, շնորհալի և հրապուրիչ երևույթ մը տալով իրեն: Լոռիի Դսեղ գյուղին մեջ նահապետական կյանք մը կապրեր բազմանդամ ընտանիքի մը հայրն ըլլալով: Բաց էին իր տան դռները բոլորին առջև: Վանքի մը պես ամեն օր ուխտավորներ և այցելուներ կմտնեին ու կելնեին՝ վայելելով այդ նահապետական տան ճոխ սեղաններն ու բարիքները: Առանց հյուրի սեղան չէր նստեր և ոչ ալ օրը կփակեր առանց բարի գործ մը կամ ծառայություն մը կատարելու: Վրեժխնդրություն, քեն,

ատելություն, չարիք և նախանձ՝ կյանքի այս զգացումները անծանոթ էին իրեն: Բյուրեղի պես մաքուր և պարզ էր իր սիրտն ու հոգին ու մանիշակի չափ խոնարհ ու քնքուշ: Տիպար հայ էր՝ ազգասեր ու գործունյա: Առաքինության և սիրո մարմնացումն էր Թումանյան: Այս գեղեցիկ ու բարձրագույն հատկանիշներով օժտված բանաստեղծը ոչ միայն սիրելի և հարգելի էր հայ ժողովրդին, այլ կհարգվեր և կսիրվեր ռուս, վրացի, պարսիկ և թաթար ժողովուրդներեն:

1914-ին, երբ Ազգային բյուրոն կազմակերպվեցավ, բանաստեղծ Թումանյան անոր անդամներեն մեկն էր: Թումանյան դոքտոր Զավրիևի հետ ճանչված էր իբր ռուսասեր: Թումանյան իր հեռատես կարողությամբ հասկցած և ըմբռնած էր, թե հայ ժողովուրդն իր աշխարհագրական դիրքին համար պետք է կապե իր քաղաքական ճակատագիրը ռուսներու բախտին հետ: Պետք չէ սպասել և ակնկալել հեռավոր դռներե օգնություն և աջակցություն ցեղին բարելավման և ազատագրման համար: Թումանյան մնաց Ազգային բյուրոյին մեջ և պայքարեցավ մութ ու տգետ ուժերուն դեմ՝ մինչև վերջ իր քաղաքականությունը ջատագովելով, հոգ չէր, որ բյուրոյի անդամները կծառանային իր դեմ մութ ուժերով և տխուր խաղերով...

1915-ին, երբ Վասպուրականը գրավվեցավ ռուսներեն, Թումանյան Վան եկավ տեսնելու իր ժողովուրդն ու հայրենիքը ավելի մոտեն[2]: Ի՞նչ տպավորություններով վերադարձավ՝ չեմ գիտեր, բայց երբ 1915-ին Մեծ գաղթը եղավ ռուսներու կեղծ նահանջով[3], բանաստեղծը իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած, եկավ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածինի, Իգդիրի և Երևանի փոողոցներուն և վանքի պատերուն տակ խռնված գաղթականներուն օգնելու[4]: Վարցավեն, երբ ամեն օր հարյուրավորներ կմեռնեին, այդ փոքրիկ ձեռքերը գիշեր ու ցորեկ իրենց կյանքին գնով կգործեին կյանք մը փրկելու վարցավի ճիրաններեն: Թումանյան կրնար անփույթ ու անտարբեր իր ցեղի ցավին՝ երջանիկ կյանք մը ապրիլ: Կրնար կեղծ բառերով ու փուճ արցունքներով, նստած և ընկողմանած ճոխություններու մեջ՝ հայրենիքի վիշտը երգել թուղթի վրա... Կրնար ամառանոցներու և հանքային ջուրերու հեշտանքը վայելել: Կրնար հարստանալ և փառքերու տիրանալ, բայց այս բոլորը արհամարհեց իր ցեղին բեկորներու համար ու տքնեցավ անոնց հետ, անոնց

ցավն ու վիշտը բաժնելով։ Իր արենակիցներուն դառն վիճակը և չարչարանքները խլեցին իր խնդում ճակատեն ու աչքերեն ժպիտն ու ծիծաղը, անթեղելով իր սրտի մեջ իր ցեղին ցավը։ Այդ ցավը մաշեցուց, հատցուց զինք, մինչև որ մահը վերջ դրավ իր խոցող խորհուրդներուն, ա՛լ չի զգալու, ա՛լ չի տառապելու և չի վիճաբանելու կեղծ և ոչ հարազատ ազգասերներուն հետ...

Թումանյան Տրապիզոնի ճակատի կռիվներեն մեկուն մեջ իր եղբայրը կորսնցուց[5]։ Վասպուրականեն Սալմաստ, երբ 25000 գաղթականությունը կը նահանջեր, իր 22 տարեկան տղան կ՚իյնար գաղթականին նահանջի գիծը ապահովելու ջանքերով[6]։ Զոհաբերության և հայրենասիրության այն բարձր ու վսեմ գաղափարական բանաստեղծը ներշնչած էր իր զավակներուն, անոնց ուսուցանելով ծառայել և մեռնիլ ամեն բանե առաջ հայրենիքի համար։

1917-ին[7], երբ Ալեքսանդրապոլի աջ կողմը Ղազանչի, Կյուլլի Պուլախ Ճզխլարի կողմերը կգտնվեի պաշարված թուրք ու թաթար ուժերե, լուր առի, թե Ալեքսանդրապոլը երեք ժամեն թուրքերուն հանձնած և Ղարաքիլիսե փախած են։ Թրքական շղթան կոտրելով Լոռի եկա, ուր Ջալալօղլիի մեջ Թումանյան Լոռիի ներկայացուցիչներով զիս դիմավորելե վերջ խնդրեց, որ Լոռի ամրանամ և կռվիմ մինչև վերջը։ Դիրքեր փորել տվի և գործի ձեռնարկեցի։ Հաջորդ օրը լուր եկավ, թե թուրքեր Ղարաքիլիսեն գրաված են[8]։ Այս լուրեն քանի մը ժամ վերջը Թումանյան եկավ և արցունքոտ աչքերով պատմեց ինձի, թե լավ է, որ 30000 գաղթականներու հետ հեռանամ Լոռիեն, որովհետև այդ մարդիկը ճերմակ դրոշակներով պիտի դիմավորեն թուրք բանակը և պիտի դավաճանեն քեզի, հաց և ռազմանյութ չպիտի տան զինվորիդ և գաղթականության։ Այս տխուր լուրին վրա մեկնեցա դեպի Դիլիջան, ուր ոչ հայ և ոչ ալ թուրք զինվորներ գտա[9]։

1919-ին, Զանգեզուրի կռիվներե վերջ[10], երբ Էջմիածին եկա և անկե Թիֆլիս, վեց օր իբր հյուր Թումանյանի տան մեջը մնացի՝ արտասահման մեկնելեն առաջ[11]։ Ճաշի սեղանին վրա, ուր ներկա էին տասը հանրածանոթ հայ դեմքեր, հարցուցի անոնց, թե ի՞նչ էր պատճառը հայ-վրացական կռվին։ Բոլորը միասին ըսին, թե մերոնք չեն արդարանար...

Վրացիներու արտաքին գործոց նախարար պր. Գեգեչկորի լուր

ղրկած էր Թումանյանին, թե Զորավար Անդրանիկը կուզեմ տեսնել. Թումանյանի հետ միասին գացինք նախարարին քով: Բանաստեղծը եղավ մեր թարգմանը, ես այսպես խոսեցա.

– Պր. Գեգեչկորի, նախ եկա ցավ հայտնել, որ այս երկու ժողովուրդները կռվեցուցիք իրարու դեմ և թշնամություն մը առաջ բերիք: Քննություն չպիտի ընեմ, թե որ մեկն էր մեղավոր: Եթե դուք այս երկու ժողովուրդներուն մեջ սիրո խարիսխը չի դնեք, երկունքն ալ պիտի տուժեն: Տարբերությունը պիտի ըլլա ձեր և մեր՝ մեկ գիշեր: Իրիկունը մեր դիակը պիտի վերցնեն, առավոտն ալ՝ ձերը: Հասարակ երկու ժողովուրդները մեղք չունին, ղեկավար ուժերդ եք պատասխանատուն: Դուք՝ պատասխանատուներդ, այս գործը կատարել տվիք: Բայց ի սեր ձեր ցեղի փոքրիկներուն, ի՞նչով մեղավոր են մեր հազարավոր որբերը, որ այնտեղ կոտորվին անոթի, և դուք փակեք Բաթումի ճամփան, ալյուր չի փոխադրելու դեպի Հայաստան:

Հուզված ձայնով մը պատասխանեց.

– Պզտիկ քննություն մը կատարե, եթե մենք մեղավոր ենք, պատրաստ ենք մեր մեղքը վերցնել մեր վրա:

– Կցավիմ, որ ես ժամանակ չունիմ և կմեկնիմ Բաթում, բարի եղեք ճամփա բանալ և վագոն տալ ժողովուրդիս համար: – Խոստացավ ինձի: Հաջորդ առավոտ յոթանասուն վագոն Բաթում ղրկված էր՝ ուտելիք և հագնելիք փոխադրելու դեպի Հայաստան:

Անցյալ տարի Կ. Պոլիս եկած էր մեր ազգայիններուն բացատրելու և ըսելու հայրենիքին կարիքներն ու պետքերը[12]: Ամեն անոնք, որոնք շփման եկան ու ճանչցան զայն, չպիտի կրնային չի սիրել ու հարգել անոր անկաշառ ու զոհաբերող սիրտն ու հոգին:

Իր գրական տաղանդին համար իմ բառերս շատ կարճ կուգան: Գրագետ չեմ, այդ բաժինը հայ գրագետներուն ու բանաստեղծներուն կթողում, սոսկ մեկ քանի վերհիշումներ ըրի կյանքի գիծերեն, այդ առաքինի և անձնվեր բանաստեղծին՝ հայ գաղթականին ու հայրենիքին համար կատարած գործն ու ջանքերը ամերիկահայ գաղութին ծանոթացնելու հույսով:

Ես ալ շատ սիրած եմ անոր երգերը: Երգած, զգացած և վայելած եմ անոր երգերն ու գրական արտադրությունները: Հիացումով հետևած եմ «Անուշ» պոեմին, «Սասունցի Դավիթին», «Մի կաթիլ մեղրին»,

«Ծունն ու Կատուին», «Քաջ Նազարին» և այլն:

Կողբամ անոր դառն վաղաժամ կորուստը: Հայրենի հողին վրա ապրող հայ գեղացին և մտավորականը դեռ շատ պետք ունեին անոր: Թումանյան կապն էր գյուղացիին և ուսյալին: Սիրելի ուսուցիչն ու վարժապետն էր մանուկներուն: Կհանգչի այսօր երկար տառապանքե և հիվանդութենե մը վերջ: Ան շատ ու շատ հանգիստ խիղճով իջավ գերեզման, անոր համար, որ կատարեց իր պարտականությունը ցեղին ու հայրենիքին հանդեպ: Վա՛յ անոնց, որոնք գիտակցաբար կատարած են շատ մը չարիքներ. հայ ցեղի զավակներուն անունին վրա՝ առանց խղճահարվելու և զղջալու:

Սիրելի՛ Հովհաննես, չկաս այլևս, որ վիճիս ու տառապիս ցեղիդ բարօրության ու գոյության համար: Ալ հանգչած են հոգնատանջ ոտքերդ ու ձեռքերդ: Թող ուրախանան ամեն անոնք, որոնք իրենց դեմ չեն գտներ սիրտդ, որ անկաշառ էր ու անխարդախ, հոգի մը, որ վեհանձն էր ու անվախ: Հանցանքը, որ ունեիր՝ **կուսակցական** չէիր... Հանցանքը, որ ունեիր՝ սիրտդ չէր կեղծեր: Ընդունե երկնային փառքիդ մեջ սա մեկ քանի տողերը, ուր ջանացած եմ ծրարել իմ հարգանքիս հետ թշվառ ցեղիս երախտագիտության արտահայտությունն ալ, որոնց համար հոգնեցար, տառապեցար և կյանքիդ գնով զոհաբերեցիր զավակներովդ Իգդիրի, Էջմիածնի և Երևանի մեջ:

Հանգի՛ստ ոսկորներուդ, հարգանք հիշատակիդ, սիրելի Հովհաննես: Ակնածանոք կը խոնարհիմ շիրիմիդ առջև: Թեթև գա հողը վրադ: